ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՄԱԼՅԱ ԵՓՐԵՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ամալյա Եփրեմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Ամալյա Եփրեմյանի (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Իրմա Ճաղարյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2025 թվականի հոկտեմբերի 21-ին (դիմումը 2025 թվականի հոկտեմբերի 20-ին Սահմանադրական դատարան է ներկայացվել էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով), որով Դիմողը խնդրել է.

«Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով խնդրում եմ՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածով և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 25, 27, 28, 69 հոդվածներով, որոշել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթների իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/6041/05/24 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է. «(...) վարչարարության և կայացված վարչական ակտի հետևանք է հանդիսացել այն, որ 2024 թվականի ապրիլի 29-ին կազմվել է կարգապահական տույժ կիրառելու մասին թիվ 43 հրամանը, համաձայն որի Ամալյա Հոմբերդի Եփրեմյանի նկատմամբ 29.04.2024թ-ից կիրառել աշխատանքային պայմանագրի լուծում կարգապահական տույժը: Կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել հենց Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագիրը, դրա շրջանակներում իրականացված հոգեբանական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից տրված և սույն գործով վիճարկվող գրությունը /հիմք՝ Գործատուի կողմից տրված թիվ 42 հրաման/:

Այսինքն, փաստացի, վարչական վարույթը նախաձեռնվել է տիկին Եփրեմյանի կողմից իրականացված որոշակի ենթադրյալ գործողությունների շրջականներում, որի արդյունքում էլ կայացվել են վարչական ակտեր, որոնք համապատասխան բացասական իրավական հետևանքներ են առաջացրել տիկին Եփրեմյանի համար: Իրականացված վարչարարությունը և դրա արդյունքում կայացված վարչական ակտերն ուղղակի ազդեցություն են ունեցել վերջինիս աշխատանքային և սոցիալական իրավունքների վրա՝ հանգեցրել դրանց խախտման:

Միաժամանակ նկատենք, որ Ամալյա Եփրեմյանի կողմից համապատասխան հայցադիմում է ներկայացվել նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որով վերջինս խնդրել է անվավեր ճանաչել աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ Գործատուի թիվ 43 հրամանը: Հայցադիմումն ընդունվել է վարույթ և դրա շրջանակներում նշանակվել է դատական նիստ /քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3979/02/24/: Միաժամանակ փաստենք, որ աշխատանքային վեճի հիմքում ևս դրված է ՀՀ Կրթության տեսչական մարմնի կարգադրագիրը և Երևանի քաղաքապետարանի կողմից տրված գրությունը, որը, սակայն, չի կարող վիճարկման առարկա հանդիսանալ աշխատանքային վեճի շրջանակներում՝ վարչաիրավական հարաբերություն ենթադրելու և այլ դատարանի իրավասությանը վերապահված լինելու հարց լինելու հիմնավորմամբ: Ստացվում է, որ աշխատան-

քային վեճի շրջանակներում հիմք է դիտարկվելու մի վարչական ակտ, որի վիճարկման հնարավորությունը տիկին Եփրեմյանը չունի, սակայն որն ուղղակիորեն առնչվում է վերջինիս աշխատանքային իրավունքներին: Իսկ վիճարկված չլինելու և դրա իրավաչափության ստուգման անհնարինության պայմաններում հետևելու է, որ Դատարանի կողմից նշյալ կարգադրագիրը դիտարկվելու է որպես հաստատված փաստ, ուստի դրա բացասական հետևանքները ևս դրվելու են տիկին Եփրեմյանի վրա:

Ավելին, կայացված կարգադրագրի հիման վրա Ամալյա Եփրեմյանի գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով հարուցվել է նաև թիվ 11130624 քրեական վարույթը, որը նույնպես վկայում է այն մասին, որ Կարգադրագիրն ուղղակիորեն միջամտող ազդեցություն է ունեցել տիկին Եփրեմյանի իրավունքների նկատմամբ:

Մինչդեռ ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը՝ անտեսելով ամբողջ վերոգրյալ վերլուծություններն ու փոխկապակցվածության վերաբերյալ հիմնավորումները, տիկին Եփրեմյանի՝ շահագրգիռ անձ հանդիսանալու փաստը, սահմանափակվել է այն հետևությամբ, որ քանի որ վարչական ակտն ուղղված է «Վ. Բելինսկու անվան թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին, ուստի նշյալ վարչական ակտի վիճարկման տեսանկյունից շահագրգիռ անձ կարող է հանդիսանալ և վարչական ակտը կարող է վիճարկել բացառապես տնօրենը»:

3. Ելնելով դիմումի և դրան կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր*

միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝* ***վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախա-*

տեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ ***լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:***

Սույն գործի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ սույն անհատական դիմումի շրջանակներում թիվ ՎԴ/6041/05/24 վարչական գործով վերջնական դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, կայացվել է **2025 թվականի մարտի 6-ին:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը* ***հաջորդ օրվանից****, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:* Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի* ***վերջին ամսվա համապատասխան ամսաթվին****:* ***Կես տարով որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետների կանոնները:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն անհատական դիմումի շրջանակներում թիվ ՎԴ/6041/05/24 վարչական գործով **վերջնական դատական ակտը կայացվել է 2025 թվականի մարտի 6-ին՝** հարկ է արձանագրել, որ Դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու համար Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված **վեցամսյա ժամկետի ընթացքն սկսվել է 2025 թվականի մարտի 7-ից:**

Ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումից, որի համաձայն՝ *ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին*, Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

սույն գործով Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետն ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 8-ին (սեպտեմբերի 7-ը եղել է ոչ աշխատանքային օր՝ կիրակի): Մինչդեռ, Դիմողի անհատական

դիմումը **Սահմանադրական դատարան է ուղարկվել Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով 2025 թվականի հոկտեմբերի 20-ին:** Հետևաբար՝ **Դիմողը բաց է թողել, և սույն գործով լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչն էլ սույն անհատական դիմումով գործի քննությունը մերժելու հիմք է:**

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական **դիմումով չի պահպանվել** Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով անհատական դիմումին ներկայացվող՝ այն **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո Սահմանադրական դատարան ներկայացնելու պահանջը:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Ամալյա Եփրեմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 նոյեմբերի 2025 թվականի
ՍԴԱՈ-157